

Բ. Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ՄԱՍԵՐԻ  
ԲԱԺԱՆՈՒՄԸ  
ՃԻՆ ԵՎ  
ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ

1911

Խմբագիր՝ Քիղ-մաթ. գիտ. դոկտոր Մ. Ա. Ղազարյան

Թումանյան Բ. Ե.

Օրվա մասերի բաժանումը Հին և միջնադարյան Հայաստանում / [Խմբ. Մ. Ա. Ղազարյան]; Երևանի պետ. համալս.—Եր.: Երևանի համալս. հրատ., 1989.—40 էջ.

Աշխատովունը նվիրված է հին և միջնադարյան Հայաստանում ժամանակի շափման միավորների, օրվա մասերի բաժանման և շափման հղանակների, ինչպես նաև շափման գործիքների նկարագրությանը։ Տրված է նաև արեգակնային և այլ տիպի ժամացույցների ստեղծման ու օգտագործման պատմությունը։

թ. 1605030000  
704 (02) — 90

ISBN—5—8084—0042—2

ԳՄԴ 22.61դ

ТУМАНИЯН БЕНИК ЕСАЕВИЧ  
ДЕЛЕНИЕ СУТОК В ДРЕВНЕЙ  
И СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ  
(На армянском языке)  
Издательство Ереванского университета  
Ереван—1990

© Թումանյան Բ. Ե., 1990

ԺԱՄԵՆԱԿԻ ԶԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ  
ՄԱՍԵՐԻ ԲՈՃԱՆՈՒՄԸ

Որևէ մեծություն չափելու համար անհրաժեշտ է ունենալ միավոր երկարության, կզոփ, չերմաստիճանի և բազմաթիվ այլ մեծություններ չափելու համար միավոր ընտրելիս մարդը եղել է ազատ։ Այսպես, որպես երկարության միավոր երկրությունը մեկում ընդունվել է ուսնաշափը, մյուսում թիզը, երրորդում՝ քայլը, չորրորդում մարդու բազուկի երկարությունը, նույնիսկ կովի բառաշիլ տարածման հեռավորությունը և այլն։ Տարբեր գեպերում նշված մեծությունները կլինեն տարբեր, սակայն եթե մի որոշակի երկարություն ընդունվում է որպես միավոր, դա բավարարում է շափումներ կատարելու համար։ Այլ է ժամանակի շափման միավորն ընտրելիս։ Բանն այն է, որ պատրաստել ճշգրիտ նույն պարբերությամբ աշխատող գործիք (ժամավանդ հնադարում) հնարավոր չեր. Այդ է պատճառը, որ մարդիկ ժամանակի շափման միավորները ընտրելիս դիմել են բնական, պարբերաբար կրկնվող երեսութներին։ Այդ տեսակետից ամենաակնառուն, իհարկե, գիշերվառ ցերեկվա հերթափոխությունն են։ Նրանց տևողությունների գումարը՝ օրը բավականին հարմար է ժամանակի միավոր ընդունելու համար։ Օրվա տևողությունը կախված է երկրի իր առանցքի շուրջ պատման հետ։ Իսկ վերջինս տասնյակ տարիների ու նույնիսկ հարյուրամյակների ընթացքում զգալի փոփոխություններ չեն կրում։

Համեմատաբար երկար տևողություններ ունեցող երեւութները (մարդու կյանքի տևողությունը, ծառերի տարիքը, երկնային մարմինների վրա կատարվող բազմաթիվ պրոցեսների տևողությունները և այլն) օրերով չափելը նպատակահարմար չէ։ Բնական, համեմատաբար երկար պարբերությամբ կրկնվող երեսութներից են ամիսն ու տարին։ Դրանց

օգտագործումը կարևոր է նաև այն տեսակետից, որ մարդու համար ան հրաժեշտ են կուտակի, ինչպես նաև տարվա հղանակների կրկնման պարբերությունների զիտեհնալը, սակայն թե՛ մեկը և թե՛ մյուսը ամբողջ թվով օրեր չեն պարունակում: Կուտակի փուկերի կրկնման պարբերությունը հավասար է 29,5306... օրվա, կամ 29 օր 12 ժամ 44 րոպե 2,9 վայրէ կյանի, իսկ եղանակների կրկնման պարբերությունն է՝ 365, կյանի, 2422... օրվա, կամ 365 օր, 5 ժամ 48 րոպե 46 վայրէ կյանի: Դրա համար էլ, բացի օրից, ընտրվել են նաև երկու այլ միավորներ ևս՝ լուսնային ամիսն ու տարին:

Համեմատաբար երկար ժամանակամիջոցների հաշվման նպատակներով օգտագործվում են օրացուցները: Անկախ նրանց կառուցվածքային տարբերություններից, բոլոր օրացուցները աշխատել են կազմել այնպիս, որ օրացուցային տարվա տևողությունը համընկնի եղանակների կրկնանի պարբերության՝ արեալարձային տարվա տևողության հետ, պարբերության՝ արեալարձային տարվա տևողության հետ: Կամ մոտ լինի դրան: Մյուս կողմից էլ ամիսը սերտորին կապված էր կուտակի կրկնման պարբերության հետ: Կապված էր կուտակի փուկերի կրկնման պարունակում է ամբողջ թվով 12 լուսնային ամիսներ (մոտ 11 օր ավելի, օրացուցիչին տարին, սովորաբար, բաղկացած էր լինում 12 ամիսցին տարին, սովորաբար, բաղկացած էր լինում 12 ամիսներից: 12-ը հարմար էր նաև այն առումով, որ տարին առանց մնացորդի բաժանվում էր երկամյակների, եռամյակների, քառամյակների և կիսամյակների:

Տարին 12 մասերի բաժանելուն համանման, 12-ական մասի են բաժանել նաև ցերեկն ու գիշերը. Ընդ որում ցերեկն առանձին է բաժանվել 12 մասի, գիշերն՝ առանձին: Սակայն, ինչպես հայտնի է, գիշերվա ու ցերեկվա տևողությունները կախված են տարվա ժամանակից և տեղի աշխարհապահական լայնությունից: Հասարակածի վրա ցերեկվա ու գիշերվա տևողությունները միշտ իրար հավասար են, իսկ աշխարհապահական լայնության մեծացման հետ աճում է դրանց տարբերությունները: Օրինակ, Հայաստանում, որտեղ աշխարհապահական լայնությունը մոտավորապես  $40^{\circ}$  է, ամառային արեալարձի աշխարհապահի համար հետաքանի մասին առանձին ու աշխանային գիշերահավասարի օրերին է, որ դրանք իրար հավասարվում են:

Ստացվում էր, որ ցերեկվա 12-րդ մասը (ժամեր) գիշերաւին ժամից կարող է բավականին տարբերվել: Իսկ ոս ոչ միայն հարմար չէր գործածության համար, այլև հնարավորություն չէր տալիս հաստատուն պարբերությամբ աշխատող ժամացույցները օգտագործել: Իսկ այդ ժամանակներում արդեն հայտնի էին դարձել արեկանակներին ժամացույցներից աշվելի նպատակահարմարները՝ ավաղի ու ջրի ժամացույցները: Այդ էր պատճառը, որ ցերեկվա ու գիշերվա տևողությունները գումարվեցին, գումարվեցին նաև նրանց 12-ական մասերը, և օրը բաժանվեց 24 հավասար մասերի:

Ահա այդպիսի ժագում ունի օրը 24 ժամի բաժանելու գիտական գրականության մեջ այդպիսի բաժանման առաջին անգամ հանդիպում ենք Կ. Պոլոսենսի աշխատություններում: Հայերը հնում օրվա ժամերին տվել են հատուկ անուններ: Ահա դրանք. ցերեկային ժամերը՝ այդն, ծայդն, ծայրացյալն, ճառագյալն, շառավիզյալն, երկրատևն, շանթակողն, հրակոթն, հուրթափյալն, թաղանթյալն, առաջուն, արփողն, գիշերային ժամերը՝ խավարուկն, աղջամուղն, մթացյալն, շաղավոտն, կամավոտն, բավականն, հալթափյալն, գեղակն, լուսաճեմն, առավոտն, լուսափայլն, փայլածում:

Անվանումներից երեսում է, որ դրանք հիմնականում ցույց են տալիս օրվա տվյալ պահի լուսավորվածության աստիճանը: Եթե օրը բաժանված լիներ 24 հավասար մասերի, այդ դեպքում կստացվեր, որ տարվա որոշ ամիսներին ցերեկային ժամերը կկրեին գիշերային անուններ և հակառակը: Նշանակում է ժամերի անվանումները Հայաստանում օգտագործվել են այն ժամանակներում, եթե ցերեկն ու գիշերը առանձին առանձին են բաժակած եղել մասերի: Ի գետ, այդ է պատճառը, որ ուշ գարերի ձեռագրերում (Եթե, իհարկե, դրանք չեն վերաբերում տոմարի պատմությանը) օրվա ժամերի անվանումները չկան: Հայ դրականության մեջ, ինչպես նաև առօրյա խոսակցություններում այդ ժամերի անվանումներից այժմ օգտագործվում են այդք, աղջամուղը, առավոտը և, մասսամբ էլ, արփողը: Սակայն դրանք օրվա որոշակի ժամեր հիմնարմաք համապատասխանության մեջ չեն գտնվում, այլ փոփոխություն են կախված տարվա տվյալ պահից, քանի որ վերջինից

են կախված ցերեկային ու զիշերային հերթափոխությունների պահերը:

Հայաստանում օրը 24 հավասար մասի բաժանման հայտնի հնագույն փաստերը վերաբերում են մեր թվականության չորրորդ դարին: Մասնավորապես այդ մասին են վկայում շորորդ դարի տոմարագետ Անդրիաս Բյուզանդացու կազմած աղյուսակները, որոնք լայն տարածում են ունեցել Հայաստանում:

Այժմ կանգ առնենք ժամը 60 մասի (բոպե) ու յուրաքանչյուր մասն էլ 60 ենթամասի (վայրկյան) բաժանման հարցի վրա: Այդ մասին կան մի շարք ենթադրություններ: Ոմանք գտնում են, որ 60-ը այնպիսի թիվ է, որը ունի մեծ թվով բաժանարարներ (2, 3, 4, 5, 6, 10, 12, 15, 20, 30). այսինքն այն հարմար է գործածության համար: Ոմանք էլ այն կապում են հին թարելոնում երկու ցեղերի միաձուլման ժամանակ ընդհանուր դրամի ընտրության հետ. իբր 60-ը այն ամենափոքր թիվն էր, որն առանց մնացորդի բաժանվում էր թե՛ մեկ և թե՛ մյուս դրամարժեքների վրա: Որոշ գիտնականներ էլ 60-ական ստորաբաժանումը համարում են պատահականություն:

Նշված այդ ենթադրությունները քննադատության շեն դիմանում: Եվ իրոք, 60-ը բավականին մեծ թիվ է (թեկուզ և ունի մեծ թվով բաժանարարներ), որ օգտագործվեր ժամերի բաժանման համար: Այդ գեպքում շատ ավելի հարմար կլիներ 12-ը, քան 60-ը: Անիմաստ է նաև երկու ցեղերի միաձուլման շետ կապելը: Զե՞ս որ այստեղ մենք գործ ունենք ժամերի ու անկյունների բաժանման հետ, որոնք ոչ մի կապ չունեն դրամների հետ: Ինչպես քիչ հետո կտևնենք, 60-ի ընտրությունը պատահականություն էլ չէ: Իսկ ո՞րն է իսկական պատճառը:

Նախ ուշադրություն դարձնենք այն փաստի վրա, որ 60-ական մասերի ու ենթամասերի են բաժանված ոչ միայն ժամերը, այլև անկյունային շափերը (աստիճանը բաժանված է 60 բոպեի, իսկ վերջինս էլ՝ 60 վայրկյանի): Սինչեւ անգամ նրանց անվանումները երկու գեպքում էլ նույնն են: Դա ևս պատահական չէ, քանի որ, ինչպես կտևնենք, դրանք ունեն ընդհանուր ծագում: Նախ պարզենք աստիճանը բոպեների ու բոպեն էլ վայրկյանների բաժանման հարցը:

Աստենադարանի մի շարք ձեռագրերում (№ 2000, № 8120

և այլն), մասնավորապես Անանիա Շիրակացու (ՎԻՇ դ.) տիեզերագիտական ու տոմարագիտական աշխատություններում նշված է, որ Կենդանաշրջանը բաժանված է 12 համաստեղությունների, որոնցից յուրաքանչյուրում Արեգակը լինում է 30 օր: Այդպիսի նշումներ կան նաև էջմիածնի վանքի գրադարանի № 3 և № 82 ձեռագրերում, որոնք թարգմանություններ են պարսկի հեղինակների աշխատություններից:

Այսպիսով, ամբողջ Կենդանաշրջանը Արեգակն անցնում է  $12 \times 30 = 360$  օրում (մնացած 5 օրը, կամ այսպես կոչվող «արարության օրերը» համարել են, որ Արեգակը լինում է 5 «աստղերի» մոտ, որոնց հայերն անվանել են Լուծ, Եղիշերու, Ծկրավորի, Փառազնոտի և Արտախոյր): Այսինքն, Արեգակի տեսանելի ընթացքը նկարագրելու համար շրջանագիծը փաստորեն բաժանվել է 12 մասի, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին՝ 30-ական մասի: Այդ վերջին մասերը մեզ մոտ կոչվել են Արեգակի աստիճաններ (կամ, հետեւելով ուրիշներին՝ Արեգակի քայլեր): Ստացվում է, որ շրջանագիծը 360 աստիճանի բաժանելը սերտորեն կապված է Արեգակի տեսանելի շարժման հետ:

Ինչպես տեսանք, աստիճանը ներկայացնում է համաստեղության  $1/30$  մասը: Թվով է, թե աստիճանը իր հերթին պետք է բաժանվեր 30 ենթամասի: Սակայն, ինչպես հայունի է, իբր կանում այն բաժանված է 60-ի: Բանն այն է, որ Արեգակը ամեն մի համաստեղություն անցնում է 30 ցերեկում և 30 գիշերում (ինչպես տեսանք, հնում ցերեկային ու գիշերային հաշվումները կատարվում էին առանձին-առանձին), այսինքն՝ միասին վերցրած՝ 60 ցերեկա-գիշերային մասում: Փաստորեն համաստեղությունը բաժանված է 60 ենթամասի: Նույն կերպ էլ նրա յուրաքանչյուր աստիճանը բաժանվել է 60 մասի, որոնց անվանում ենք (աղեղնային) բոպե. Վերջինս էլ, նման ձեռվ, բաժանվել է 60 (աղեղնային) վայրկյանի:

<sup>1</sup> Եթե շնչառվենք հողաշափական աշխատանքների ժամանակ օգտագործվող երկրաշափական պարզապուլյան առնչությունները, ապա պատմականորեն այդ բաժանումները, ինչպես նաև ողբարային եռանկյունաշափական հաշվումները, կատարվել են երկնային մարմինների (առաջին հերթին՝ Արեգակ) տեսանելի շարժումների օրինաշափությունների բաշահայտման, իսկ հետագայում կիրառվել են նաև հարթության վրա (հարթ եռանկյունաշափություն)՝ երկրաշափական նպատակներով:

Աղեղնային բաժանումները սերտ կեցպով կապված են ժամանակի միավորների հետ, քանի որ դրանք, ինչպես տեսանք, կապված են Արեգակի այս կամ այն ժամանակամիտանքում անցած ճանապարհի հետ: Եվ դրանից հետո միանգամայն բնական է ժամը 60 րոպեի, րոպեն էլ 60 վայրկյանի բաժանել: Դրա հետ պետք է կապել նաև այն, որ հնում մի շարք ժամանակներում (Հատկապես Բարելոնում) թվաբանության մեջ երկրներում (Հատկապես Բարելոնում) թվաբանության մեջ օգտագործվել են հաշվման 60-ական համակարգեր:

Ժամերի մասերը, ինչպես և նշված է կ. Թաղումեսի աշխատություններում, սկզբում կոչվում էին Partes minutae primae, այսինքն՝ առաջին փոքրիկ մաս և Partes minutae secundae, այսինքն՝ երկրորդ փոքրիկ մաս: Հետազում դրանք կարճ անվանվեցին տիուտայինուսա (բառացի՝ փոքրանք կարճ անվանվեցին տիուտայինուսա (բառացի՝ «միրիկ») և secundae-սեկունդա (երկրորդ): Արեւածայերը «միրիկ» փոխարեն օգտագործում են «րոպե»: Այն ժագում նույտային փոխարեն օգտագործում է ակնթարթ-կարճ ժամանակակից հունականից և նշանակում է ակնթարթ-կարճ ժամանակակիցոց: «Սեկունդային» փոխարեն էլ օգտագործում են «վայրկմիջոց»: Վերջինս «վայր» («վայրիկ») բառից է, որ նշանակում յան»: Վերջինս «վայր» («վայրիկ») բառից է, որ նշանակում է բացասան, դաշտ: Հետազում այն ստացել է նոր է բացասան, դաշտ: Հետազում այն ստացել է նոր է բացասան, դաշտ:

Արեւածայերը «վայրկյան» օգտագործում են ժամի 60-րդ մասի («մինուտային») փոխարեն, իսկ «երկվայրկյան» (այսինքն՝ երկրորդ վայրկյան) «սեկունդային» փոխարեն: Իսկ ո՞ր պահն է համարվել օրվա սկիզբը: Հին Բարելոնում, Ասորեստանում ու Հայաստանում օրվա սկիզբը համարում էին Արեւածագը: Հրեաները նախընտրում էին արեւամուտը: Արարեանագը: Հրեաներում ընդունված էր որպես օրվա սկիզբը կեսօրը: Բական երկրներում ընդունված էր որպես օրվա սկիզբը կեսօրը: Բական երկարագույն ժամը 18-ին, կամ գեկրետային ժամանակով ժամը 19-ին) կուսինը լինում է Հարավում, 6 ժամ հետո մայր է մտնում: Լիալուսինը ժագում է երեկոյան ժամը 18-ին, 6 ժամ հետո (կես գիշերին) լինում է Հարավում, իսկ առավոտյան ժամը 6-ին էլ՝ մայր է մտնում: Վերջին քառորդում լուսինը ժագում է արեւամուտից 6 ժամ հետո, այսինքն կես գիշերին: Առավոտյան ժամը 6-ին լինում է Հարավում, իսկ ժամը 12-ին՝ մայր է մտնում: Օրվա մյուս ժամերը, ինչպես նաև միշտակալ փուլերի դեպքում կարելի է, իհարկե, ավելի փոքր ճշտությամբ որոշել գիշերված ժամը ընդմիջարկելով նկարագրված դեպքերը:

## ՕՐՎԱ ՄԱՍԵՐԻ ԶԱՓՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ ՀՆՈՒՄ ՈՒ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Պատմությանը հայտնի են օրվա ժամերի շափման շատ մեթոդներ, դրանցից են, օրինակ, օրվա ժամերի շափումը

երկնային մարմինների դիտումներով, կինդանական ու բուսական աշխարհում տեղի ունեցող փոփոխություններով (որոնք կապված են օրվա որոշակի պահերի հետ), այդ նպատակներով հատուկ ստեղծված սարքերի ու գործիքների օգնությամբ: Կանգ առնենք դրանց նկարագրման վրա:

### 1. ՕՐՎԱ ՊՎՅԱԼ ՊՎԱԲԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԻՏՈՒՄՆԵՐԸ

Կեսօրին ուղղաձիգ առարկաների ստվերը ուղղված է լինում գեպի հյուախ և ունենում է ամենափոքր երկարությունը: Դա հնարավորություն է տալիս ոչ միայն որոշելու հորիզոնի կողմերը, այլև իմանալու իրական կեսօրը: Ցերեկվամյուս ժամերը կարելի է որոշել երկինքը մտովի մասերի բաժանելով և Արեգակի դիրքը որոշելով միջօրեի գծի նկատմամբ: Դա հատկապես հեշտ է լինում գարնանային ու աշնանային գիշերահավասարի օրերին, եթե Արեգակը ժագում է արեւելում և մայր է մտնում արևմուտքում, ցերեկվա տեղությունն էլ լինում է 12 ժամ: Տարվա մյուս օրերին փոխված է լինում և ծագման ու մայրամուտի դիրքերը, և ցերեկվա տեղությունը. այդ պատճառով էլ ժամանակը որոշվում է ավելի փոքր ճշտությամբ:

Գիշերվա ժամը մոտավորապես կարելի է որոշել կուսնի փուլի և նրա դիրքի օգնությամբ: Միայն պետք է հաշվի առնել, որ առաջին քառորդում արեւամուտին (այսինքն, մոտավորապես ժամը 18-ին, կամ գեկրետային ժամանակով ժամը 19-ին) կուսինը լինում է Հարավում, 6 ժամ հետո մայր է մտնում: Լիալուսինը ժագում է երեկոյան ժամը 18-ին, 6 ժամ հետո (կես գիշերին) լինում է Հարավում, իսկ առավոտյան ժամը 6-ին էլ՝ մայր է մտնում: Վերջին քառորդում լուսինը ժագում է արեւամուտից 6 ժամ հետո, այսինքն կես գիշերին: Առավոտյան ժամը 6-ին լինում է Հարավում, իսկ ժամը 12-ին՝ մայր է մտնում: Օրվա մյուս ժամերը, ինչպես նաև միշտակալ փուլերի դեպքում կարելի է, իհարկե, ավելի փոքր ճշտությամբ որոշել գիշերված ժամը ընդմիջարկելով նկարագրված դեպքերը:

Համեմատարար ուշ դարերում (17—18-րդ դդ.) գիշերված ժամի որոշման համար օգտագործվել են Մեծ արջի համա-

տեղության աստղերի դիրքը, Երեսներս ուզգենք դեպի ԲԱԵ-  
ՆԱՅԻՆ աստղը և պատկերացնենք նրա շուրջը զծված երկնա-  
յին ժամացույցի թվատախտակ՝ վերևում 12, աչ կողմում 3,  
ներքեւում՝ 6 և ձախ կողմում 9: Ժամաւարքի մի ծայրը թող  
ամրացված լինի ԲԱԵՆԱՅԻՆ աստղին, իսկ շարժական ծայրով՝  
ուզդված դեպի Մեծ արքի 7 աստղերի շերտի վերջին երկու  
աստղերը (ա և թ): Այդ ժամացույցի ժամաւարքը դարնանա-  
յին գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ի կես գիշերին ուղղղ-  
ված է լինում դեպի վերև, այսինքն ցույց է տալիս ժամը  
12-ը: Ամեն ամիս անցնելուց հետո կես գիշերին նրա դիրքը  
մեկ ժամով հետ է ընկնում, փետրվարի համար ցույց տալով  
ժամը 1-ը: Միջանկյալ ամսաթվերի համար կարելի է որոշել  
սլաքի մոտավոր ցուցմունքը: Հիշենք նաև, որ գիշերվա ըն-  
թացքում ժամաւարքը երկու անգամ ավելի դանդաղ կշարժվի,  
քան սովորական ժամացույցինը, քանի որ երկինքը տեսա-  
նելի մեկ լրիվ պտույտը կատարում է ոչ թե 12, այլ 24 ժամ-  
վա ընթացքում: Սովորական ժամաւարքից նաև կտարրերից  
նաև նրանով, որ կպտտվի հակառակ ուղղությամբ:

## 2. Կենդանական ու բուսական ժամացույցներ

Կուլտուրական զարգացման շատ վաղ շրջանում մարդիկ  
օրվա ժամերը, կոպիտ մոտավորությամբ, որոշում էին օգտը-  
վելով կենդանիների և թլուտների կանչից և մարմնական  
առանձնահատկություններից: Այսպես, օրինակ, գիշերվա ժա-  
մերը որոշելու համար օգտվել են աքլորի առաջին և երկրորդ  
կանչերից: Որոշ երկրներում էլ ժամը որոշելու համար օգտվել  
են կատվի աշքի բիբի ձևի փոփոխություններից: Եթե բիբը  
գծի տեսքով էր երևում, նրանք գիտեին, որ կեսօր է: Հետզհե-  
տե բիբը դառնում է օվալաձև, իսկ կես գիշերին լինում էր  
շրջանաձև:

Սաղիկների մի մասը բացվում է արևածագին և փակվում  
արեամուտին: Կան նաև այնպիսի ծաղիկներ, որոնք բացվում  
ու փակվում են օրվա այլ, բայց որոշակի ժամերին: Օգտվելով  
այդ բանից, ոմանք ընտրում ու շրջանաձև դասավորում էին  
ծաղիկներն այնպես, որ նրանք բացվեն կամ փակվեն ժաղկյա-  
ժամացույցի թվատախտակի տվյալ ցուցմունքին համապա-

տամիանող պահին: Դրանց օգնությամբ էլ որոշվում էր օրվա  
ժամը:

## 3. Ժամանակ ցույց տվող գործիքներն ու սարեերը նին ու միջին դարեերում

ա) Գնումոն: Բառացի նշանակում է զիտցող. սա արեգակ-  
նային ժամացույցների նախատիպն է: Սրանք հարթ տեղան-  
ցեր էին, որոնց ստվերի ուղղությամբ պատրաստված  
որոշվում էր հորիզոնի կողմերը և օրվա ժամը. ավելի ուշ  
ը լինում էր ամենաերկարը և ուղղված արևմտյան կողմը.  
այնուհետեւ հետզհետեւ կարճանամում էր և, պտովելով ժամա-  
ցույցի սլաքի պտտման ուղղությամբ, կեսօրին լինում էր  
նվազագույն երկարության՝ ուղղվելով դեպի հյուսիս: Հետո-  
գայում նորից էր հետզհետեւ երկարում և արևամուտին լի-  
նում ամենաերկարն ու ուղղվում դեպի արևելք: Գնումոնի  
ստվերի նվազագույն երկարությունը կախված էր հորիզոնից  
տվյալ օրը Արեգակի ունեցած առավելագույն բարձրությունից  
վերջինս էլ իր հերթին կախված էր Արեգակի հակումից (նրա  
անկյունային հեռավորությունը հասարակածից) և տեղի աշ-  
էլ այն ուղղակի հավասար է տեղի աշխարհագրական լայնու-

շումում: Հոգումում կայսերական լայնությունից: Իսկ գիշերահավասար օրերին  
թյանը:

Հոգումում Օգոստոս կայսրի օրոք պատրաստվել է զնումոն,  
որի բարձրությունը հավասար էր 34 մետրի: Իսկ 15-րդ դա-  
ամենամեծ գնումուն-ժամացույցը՝ 92 մետր բարձրությամբ:  
16-րդ դարի սկզբներին ավատրիական Բրու քաղաքում պատ-  
րաստվեց գնումուն-ժամացույց, որի ձողի փոխարեն մարդ  
էր կանգնում: Գծված երկու զուգահեռ ուղիղների վրա գրված  
էին 12 ամիսների անվան առաջին տառերը: Մարդը կանգ-  
նում էր համապատասխան ամսվա տառի վրա և նայում, թե  
ստվերը ժամագծերից որի վրա է ընկնում:

Որպեսզի ստվերի ժամացույց ավելի հստակ երևար, ձողի  
ծայրին պատրաստում էին օղակ և հետեւում միայն օղակով  
անցնող լույսի գիրքին: Այս բանը հնարավորություն տվեց  
գնումունները պատրաստել ոչ միայն բացօթյա, այլև տանը:

Պատի մեջ պատրաստված հատուկ անցքով Արեգակի լուսը ընկնում էր հատակին կամ դիմացի պատին, որոնց վրա նըշ-ված էին օրվա ժամերը ցուց տվող զծեր կամ այլ նշաններ:

Հեղիսատանում որպես ժամացուց օգտագործում էին ձեռ-սափայտերը: Վերջիններս ունեին 6 նիստ և հատուկ անցքեր: Փայտը տարվա համապատասխան երեսով ուղղվում էր դեպի Արեգակը և շարժական ձողը դրվում էր անցքում՝ նրան ուղ-դահայաց: Զողի ստվերի ժայրը փայտի վրա ցուց էր տալիս օրվա համապատասխան բաժանմունքը՝ ժամը:

Բ) Արեգակնային ժամացուցներ: Այն սարքերը, որոնցով որոշվում է ցերեկվա ժամը, օգտագործելով առարկաների ստվերի ուղղության փոփոխությունը, կոչվում են արեգակ-նային ժամացուցներ: Հայտնի ամենահին արեգակնային ժամացուցը կառուցվել է Բարեկլոնում՝ մ. թ. ա. 15-րդ դա-րում: Անաբսիմանդրոս Միլեթացին (մ. թ. ա. մոտ 610—546) հույն փիլիսոփաններից առաջինն էր, որը մշակեց արե-գակնային ժամացուցը կառուցելու արվեստը (գնոմոնիկա) և ինքն էլ լակեդոմոնում կառուցեց արեգակնային ժամացուցը:

Ըստ թվաշախտակի հարթության դիրքի, արեգակնային ժամացուցները լինում են հասարակածային, հորիզոնական և ուղղաձիգ:

Հասարակածային արեգակնային ժամացուցների թվա-շախտակի հարթությունը զուգահեռ է երկրի հասարակածա-յին հարթությանը: Դրա թվաշախտակի հարթությունը ամ-յին հարթությանը: Դրա թվաշախտակի հարթությունը ամ-րացնում է հարիզոնական հարթության հետ այնպես, որ նրանք միմյանց հետ կազմեն ( $90^{\circ}$ -Փ) անկյուն, որտեղ Փ-ն տեղի աշխարհագրական լայնությունն է: Զողն ամրաց-ք-ն տեղի աշխարհագրական լայնությունն է: Զողն ամրաց-ք-ն ուղղահայաց թվաշախտակի հարթությանը: Դրանով վում է ուղղահայաց թվաշախտակի հարթությանը: Դրանով վում է նրա զուգահեռ լինելը երկրի պտտման ա-աղահովում է նրա զուգահեռ լինելը երկրի պտտման ա-աղահովում է նրա զուգահեռ լինելը երկրի պտտման ա-աղահովում է այնպես, որ ժամը 12-ին համապատասխանող ժամագիծը ուղղահայաց լինի նշված երկու հարթությունների հատման զծին (այսինքն նրա պրո-յեկցիան հորիզոնական հարթության վրա ընկնի հարավ-հյու-սիս ուղղությամբ)<sup>2)</sup>: Մնացած ժամագիծը տարվում են հա-


2 Կողմնորոշումը հնում կատարվում էր ըստ առարկաների օրվա մեջ ուղղած ամենակարճ ստվերի ուղղության: Հեռագայում արդ նպատակով օգտագործվեցին նաև կողմնացուցներ (որոնք ջինատանում գործություն ունեին գնում 4000 տարի մ. թ. ա.):

վասարահեռ՝  $15^{\circ}$ -ական՝ ժամը 12-ի ժամագիծի գեպի մեկ և մյուս կողմերը ինչպես հայտնի է, Արեգակը կես տարի գրտ-նրվում է հասարակածից հյուսիս (նրա հակումը դրական  $\delta > 0$ ), կես տարի էլ՝ հասարակածից հարավ (հակումը բացա-սական  $\delta < 0$ ): Նշանակում է մեր կառուցած ժամացուցը պիտանի կլինի միայն կես տարի: Տարվա մյուս կեսին Արե-գակը կգտնվի թվաշախտակի հարթությունից ներքեւ և ձողը ստվեր չի տա: Դրա համար էլ ժամագիծը են տարվում նաև թվաշախտակի հարթության ներքեկի երկսին և ձողը շարու-նակվում է նաև մյուս կողմբ: Նոր բաժանումներ չկատարելու համար երեկն թվաշախտակի հարթությունը պատրաստում են թափանցիկ նյութից և երկու զեպքում էլ օգտվում նույն ժամագիծերից:

Հասարակածային արեգակնային ժամացուցներում ժա-մագիծերի հավասարաշափի տարված լինելը հիմնավորվում է նրանով, որ տարվա բոլոր օրերին Արեգակի օրական տեսա-նելի շարժումը տեղի է ունենում հասարակածային հարթու-թյանը զուգահեռ հարթություն ունեցող շրջանագծով: Եվ քանի որ մի լրիվ պտույտը Արեգակը կատարում է 24 ժամում, մեկ ժամում նա իր ուղղությունը կփոխի  $360^{\circ} \cdot 24 = 15^{\circ}$ -ով: Թվա-տախտակի հարթության այլ դիրքի զեպքում այդ օրինաշա-փությունը կխախտվի:

Հորիզոնական արեգակնային ժամացուցներում թվա-տախտակի հարթությունը հորիզոնական է, ձողն ամրացված է կենտրոնում և ուղղված դեպի աշխարհի հյուսիսային բև-վեռը (հորիզոնական հարթության հետ ձողը կազմում է ան-կյուն՝ հավասար տեղի աշխարհագրական լայնությանը: Ժամը 12-ին համապատասխանող ժամագիծը ուղղվում է դեպի հո-րիզոնի հյուսիսի կետը: Մնացած ժամագիծը ուղղությունները որոշելու համար վարվում են հետեւյալ կերպ: զ. 1:

Դիցուկ ՕԱ-ն ժամացուցի ձողն է և ՕԾ-ն ուղղված է դեպի հյուսիսի կետ: ՕԱ-ն ՕԾ-ի հետ կկազմի Փ անկյուն, որը, որպես կենտրոնական անկյուն, կլափի ԱԾ աղեղով: Եթե Արեգակի ժամացին անկյունը է, ապա համապատա-խան ժամագիծը ՕԾ-ի հետ կկազմի Խ անկյուն: ԱԲԾ սֆերիկ ուղղանկյուն եռանկյան նկատմամբ կիրառենք նեպերի կա-նոնը, ըստ որի, եթե սֆերիկ եռանկյան ուղիղ ան-



Գծ. 1:

կունը ջնջենք, էջերը փոխարինենք նրանց լրացուցիչներով, ապա մնացած գինդ տարրերից յուրաքանչյուրի կոսինուսը հաւաքար կլինի նրան կից տարրերի կոսանգենսների, կամ ու իյց տարրերի սինուսների արտադրյալին։ Այսպիսով,

$$\cos(90^\circ - \gamma) = \csc(90^\circ - \alpha) \cdot \csc(\alpha),$$

որտեղից՝

$$\csc x = \sin \alpha \csc \gamma.$$

Բանաձեռն օգտագործելիս է-ի փոխարին պետք է զնել արվական ժամկա և ժամը 12-ի տարրերությունը՝ արտահայտված անկյունային միավորներով (մեկ ժամին 15° հաշվով) և գտնել այդ ժամագծով ու ժամը 12-ի զծով կազմված անկյունը ( $x$ ):


$$\csc(180^\circ + \alpha) = \csc \alpha \csc(180^\circ - \alpha) = \csc \alpha \csc(180^\circ - \gamma).$$

$\csc(180^\circ + \alpha) = \csc \alpha$  վերածման բանաձեռից բխում է, որ մինչև կեսօր և կեսօրից հետո համապատասխան ժամագծերը սիմետրիկ կլինեն 12-ի ժամագծի նկատմամբ։ Անկախ աշխարհագրական լայնությունից ժամը 6-ի և 18-ի զծերը կեսօրի գծի հետ կկազմեն ուղիղ անկյուն (ուղղված կլինեն մեկը դեպի արևմուտք, մյուսը՝ դեպի արևելք), քանի որ այդ գեպը քում

$$\csc \alpha = \csc(180^\circ - \alpha) = \csc(180^\circ - \gamma) = \csc \gamma = \infty;$$

Տվյալ վայրի համար Փ-ն (հետեւապես և սինֆ-ն) կլինի հաստատում, իսկ տանգենսն էլ 90°-ին մոտենալիս ավելի արագ է փոփոխվում։ Նշանակում է ժամագծերը ավելի իսկ դասավորված կլինեն կեսօրի գծի շորջը, իսկ հեռանալիս ավելի ու ավելի կնուրանան (փոխադարձ անկյունային հեռավորությունները կմեծանան):

Համեմատաբար ուշ շրջանում (17—19-րդ դդ.) օգտվել են ժամագծեր տանելու նաև հետեւյալ զուտ երկրաչափական եղանակից (տե՛ս գծ. 2):



Գծ. 2:

Վերցնենք փոխադարձ ուղղահայաց  $AB$  և  $CD$  ուղիղները և  $OMN$  ուղղանկյուն եռանկյունը, որի  $NOM$  անկյունը հա-

վասար է տեղի աշխարհագրական լայնությանը (φ), և կետից տանինք ներքնաձիգին ուղղահայաց (NK) մինչև AB-ի հետ հատվելը: Օ՛ կետից տանինք O'K=KN շառավղով կիսաշրջան և այն բաժանենք 12 հավասար մասերի: Բաժանման կեզան և այն բաժանենք 2 հավասար մասերի:

Ցույց տանք, որ նման երկրաշափական կառուցումը տեսականորեն հիմնավորված է: Եվ իրոք, ONK եռանկյունուց ունենք՝

$$NK = OK \cdot \sin\varphi:$$

Դիցուկ է ժամին համապատասխանում է d' կետը: O'kd' եռանկյունուց կունենանք՝

$$O'k = kd' \cdot \cot\gamma, \quad (2)$$

Մյուս կողմից էլ, ըստ կառուցման,

$$NK = O'K,$$

(1) և (2) հավասարությունների աջ մասերի հավասարեցումից կստանանք՝

$$OK \cdot \sin\varphi = kd' \cdot \cot\gamma,$$

կամ

$$\frac{kd'}{OK} = \sin\varphi \cdot \cot\gamma;$$

Բայց


$$\frac{kd'}{OK} = \operatorname{tg}x,$$

Այսինքն ստանում ենք

$$\operatorname{tg}x = \sin\varphi \cdot \cot\gamma$$

վերևում ստացված բանաձեռք, որով էլ ապացուցվում է երկրաշափական մեթոդի իրավացիությունը:

Ողղաձիգ արեգակնային ժամացույցները սովորաբար պատրաստում են շենքերի հարավային պատի վրա: Չողք պատին ամրացվում է այնպես, որ նա ուղղված լինի դեպի հյուսիսային բևեռ, այսինքն պատի հետ կազմի  $(90^\circ - \varphi)$  անկյուն (քանի որ, ինչպես տեսանք, հորիզոնական հարթության հետ այն կազմում էր փակուն): 12-ի ժամագիծը ձողի ամրացման կետից ուղղված է լինում ուղղաձիգ ներքեւ:




Մյուս ժամագծերի ուղղությունները որոշելու համար դիմենք № 3 գծագրին: Նախորդին համանման ABC սֆերիկ ուղղանկյուն եռանկյան նկատմամբ կիրառելով նեպերի կանոնը, կստանանք՝

$$\cos(90^\circ - 90^\circ + \varphi) = \operatorname{ctg}\gamma \cdot \operatorname{ctg}(90^\circ - \gamma)$$

կամ

$$\operatorname{tg} x = \cos \varphi \cdot \operatorname{tg} t$$

Այստեղ կս ժամագծերը կարելի է տանել օգտվելով զուտ երկրաշափական եղանակից (տե՛ս գծ. 4): OA ուղղաձիգի և CD հորիզոնականի հատման A կետից տանենք ուղղահայաց ON-ին, որտեղ ON-ը տարված է այնպես, որ AON անկյունը հավասար լինի ( $90^\circ - \varphi$ ): AO-ի վրա վերցնենք AE=AN հավասար լինի ( $90^\circ - \varphi$ ): AO-ի վրա վերցնենք AE=AN



Գծ. 4:

Հատվածը: E-ն ընդունելով որպես կենտրոն, տանենք EΔ շառավղով կիսաշրջան և այն բաժանենք 12 հավասար մասերի: E-ն բաժանման կետերի հետ միացնող շառավիղները շարունակենք CD-ի հետ հատվելը: Ստացված կետերը միաց-

նելով O-ի հետ, կստանանք համապատասխան ժամագծերը: Կառուցման ճշտության մեջ համոզվելու համար օգտվենք գծագրի նշանակումներից: Կստանանք՝

$$\operatorname{tg} x = \frac{AM}{AO} \quad \text{և} \quad \operatorname{tg} t = \frac{AM}{AE},$$

AM-ի արժեքը երկրորդ արտահայտությունից տեղադրելով առաջինի մեջ, կստանանք՝

$$\operatorname{tg} x = \frac{AE \cdot \operatorname{tg} t}{AO},$$

Մյուս կողմից  $AE = AN = AO \cdot \sin (90^\circ - \varphi)$ : Տեղադրելով վերջին արտահայտության մեջ և AO-երը կրծատելով, վերջնականորեն կստանանք


$$\operatorname{tg} x = \cos \varphi \cdot \operatorname{tg} t,$$

որը և ցույց է տալիս կառուցման իրավացիությունը:

Ուղղաձիգ արեգակնային ժամացույց կառուցելու համար կարելի է օգտվել նաև հորիզոնական ժամացույցի սխեմայից: Վերջինս զուգահեռ տեղափոխում ենք և հենում պատին այնպես, որ AO-ն, ինչպես նաև ժամացույցի հարթությունը ուղղահայաց լինի պատին: AN ձողը շարունակում ենք մինչև պատի հետ հատվելը և այդ կետում, այդ նույն ուղղությամբ ամրացնում ձող: Ձողի հիմքը միացնելով ժամագծերի ու պատի հատման կետերին, կստանանք ուղղաձիգ ժամացույցի համապատասխան ժամագծերը:

Եթե շենքի պատը չի նայում ուղիղ դեպի հարավ, արեգակնային ուղղաձիգ ժամացույց կառուցելու համար հորիզոնական ժամացույցի սխեման անհրաժեշտ է պատին մոտեցնել այնպես, որ նրա թվայտակի հարթությունը ուղղահայաց լինի պատին, իսկ ձողն էլ ուղղված դեպի հյուսիսային բևեռ: Ձողի և պատի հատման կետում այդ նույն ուղղությամբ ամրացնում ենք ձող, իսկ ժամագծերի և պատի հորիզոնական գծի հատման կետերը միացնում ձողի հիմքի հետ:

Պատմությանը հայտնի են նաև դեպի արեկելք և արեւուտք ուղղված ուղղաձիգ պատերի վրա կառուցված արեգակնային ժամացույցներ (տե՛ս գծ. 5): Դրա համար AB հորիզոնական



Գծ. 5:

ուղի Ա կամավոր կետից տարվում է  $MN$ -ը, որը  $AB$ -ի հետ կազմի տեղի աշխարհագրական լայնությանը հավասար անկյուն ( $\phi$ ):  $MN$ -ի վրա ընտրված  $O$  կամավոր կետը ընդունելով որպես կենտրոն, կառուցվում է կամավոր շառավիղով կիսաշրջան և այն բաժանվում 12 հավասար մասի: Այդ կետերը  $O$ -ի հետ միացնող շառավիղների շարունակությունների և շրջանագծին տարված  $CD$  ( $CD \perp MN$ ) շոշափողի հատման կետերից տանելով  $MN$ -ին գուգահեռ ուղիղներ, ստացվում են համապատասխան ժամագծերը: Զողը պետք է գուգահեռ լինի  $MN$ -ին, ինչպես նաև պատից (այսինքն  $MN$ -ից) գտնվի շրջանագծի շառավիղին հավասար հեռավորության վրա: Պատին ամրացնելու համար, սովորաբար, ձողը պատրաստվում է հարմանդաձև (սկորա) և ծայրերը ամրացվում պատի մեջ:

Գծագրում բերված է ժամացույցի սխեման, երբ այն կառուցված է դեպի արևելք ուղղված պատի վրա: Համանման եղանակով կառուցվում են դեպի արևմուտք ուղղված պատի ժամացույցի ժամագծերը (որոնք կունենան հակառակ թերթություն):

Նշված կառուցման ճշտության մեջ համոզվում ենք՝ ինելով

հետեւալ դատողություններից: Եթե ժամացույցը պատրաստված լիներ հասարակածի վրա ( $\phi=0$ ), Արեգակը շարժվելով հասարակածային հարթությանը գուգահեռ, ձողը կլիներ հորիզոնական և նրա ստվերը միշտ կլիներ գուգահեռ  $AB$  ուղղին: Ընդ որում ժամը 6-ին ստվերը կհամընկներ  $AB$ -ի հետ. մեկ ժամ գրանից հետո, Արեգակը տեղափոխված լինելով  $15^{\circ}$ -ով, ստվերի հեռավորությունը  $AB$ -ից կլիներ գ. է.  $tg 15^{\circ}$ , որտեղ գ. է. ձողի հեռավորությունն է պատից: Երկու ժամ հետո ստվերը հեռացված կլինի գ. է.  $tg 30^{\circ}$ -ով, և այդպես մինչև ժամը 12-ը, երբ այդ հեռավորության համար կստացվի գ. է.  $tg 90^{\circ}=\infty$  արժեք: Եվ իրոք, կեսօրին Արեգակը դանվելով պատի ուղիղ վերևում, ձողի ստվերը գուգահեռ կլինի պատին, այսինքն նրա հետ չի հատվի:

Եթե ժամացույցը չի կառուցված հասարակածի վրա ( $\phi \neq 0$ ), ապա ստվերը միշտ ինքն իրեն գուգահեռ մնալու և հեռավորությունը գ. է.  $tg n \cdot 15^{\circ}$  (որտեղ  $n=1, 2, \dots, 24$ ) արժեքին հավասար լինելու համար անհրաժեշտ է, որ ձողը լինի հասարակածին ուղղահայաց, այսինքն այն ուղղված լինի դեպի քանի: Իսկ դա էլ ցույց է տալիս տեքստում նկարագրված կառուցման ճշտությունը:

Պատմությանը հայտնի են նաև կեսօրն ազդարարող արեգակնային ժամացույցներ: Զողի ծայրին դրվում էր սուպնյակ, որի կիզակետում հավաքվում էին արևի ճառագայթները: Եվ երբ այն ընկնում էր համապատասխան ժամագծի վրա գրտեղվող վառողի վրա, այրումից առաջացած գագերի ճնշման տակ, համապատասխան լծակների օգնությամբ, ժամանակն ազդարարվում էր զանգերի զողանչով: Նրեմն էլ զանգերի փոխարեն այդ պահն ազդարարվում էր թնդանոթի կրակոցով:

գ) Ստվերաշափեր: Այն սարքերը կամ աղյուսակները, որոնցով որոշվում է ցերեկված ժամը, օգտագործելով ուղղածից առարկաների ստվերի երկարության փոփոխությունը, կոչվում են ստվերաշափեր:

Այստեղ շափվում է ուղղածիգ առարկայի ստվերի երկարությունը և այն համեմատվում նրա բարձրության հետ: Հաճախ այդ նպատակով օգտագործվել է մարդու ստվերը: Կանգնել են հարթ տեղ և ուսնաշափերով հաշվել ստվերի երկարությունը: Օգտվելով նախօրոք կազմված աղյուսակից, որուել

Են օրվա ժամը: Բայց որովհետև տարբեր ժամանակներին, օրվա միննույն ժամին տարբեր է լինում նաև Արեգակի բարձրությունը հորիզոնից, նշանակում է տարբեր կլինեն նաև առարկայի ստվերի երկարությունները: Դրա համար էլ, որպես կանոն, ստվերաշափ-աղյուսակները կազմել են ըստ ամիսների, նույնիսկ յուրաքանչյուր 10 օրվա համար:

Արեգակնային ժամացույցներն ունեն մի շարք թերություններ.

1. Ժամանակի շափման ճշտությունը մեծ չէ:
2. Նրանցից կարելի է օգտվել միայն ցերեկ ժամանակ, այն էլ ոչ ամպամած եղանակին:

3. Անհարմար են տեղափոխման համար: Իսկ աշխարհագրական այլ լայնություն ունեցող վայր տեղափոխելիս անհրաժեշտ է նոր ժամագծեր կամ աղյուսակներ կազմել, ինչպես նաև փոխել ծողի թերությունը:

4. Արեգակնային ժամացույցները ցույց են տալիս իրական արեգակնային ժամանակը, որը միշտն արեգակնային ժամանակից տարբերվում է, վերջինս ստանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել ժամանակի հավասարությը, իսկ դրա համար պետք է օգտվել հատուկ կազմած աղյուսակից կամ սխեմայից:

Նշված թերությունների պատճառով, հասարակության զարգացման աճող պահանջներին այդպիսի ժամանակաշափորդիքները բավարարել չեն կարող: Մարդիկ ստիպված էին մտածել օրվա մասերի շափման այլ մեթոդների մշակման ու գործիքների ստեղծման մասին:

Պ) Զրի ժամացույցներ: Մեր թվականությունից դեռևս 14—16 դար առաջ Եգիպտոսում հանդիպում են զրի ժամացույցների նախատիպեր: Զրի սակավ լինելու պատճառով միննույն առուն ծառայում էր բազմաթիվ հողակտորների ոռոգման համար: Որպեսզի հողատերները հավասար ժամանակամիջոցներում զրից օգտվեին, դնում էին ջրով լի կաթսա, որի հատակին անցը էր բացած: Երբ ջուրը անցըից թափվելով կաթսան ամբողջովին դատարկվում էր, փոխում էին առվի հոսքի ուղղությունը և ջրում հաշորդ դաշտը: Զրի այդ նախատիպ «ժամացույցը» հետագայում հետզհետե կատարելագործվեց: Նախ կաթսայի ներքին մակերևույթի վրա գծեցին

շրջաններ ու համարակալեցին, որով հնարավորություն ըստեղծվեց շափել նաև համեմատաբար փոքր ժամանակամիջոցներ: Սակայն զրի թափվելու արագությունը կախված էր հեղուկի ճնշումից, այսինքն անոթում եղած զրի քանակությունից: Սկզբում ճնշումը մեծ էր և ջուրը թափվում էր արագ, այնուհետև հետզհետե պրոցեսը դանդաղում էր: Դրա հետեւ վանքով բարդանում էր ժամագծերի կառուցումը (զրանք պետք է տարվեին անհավասար հեռավորությունների վրա): Այդ թերությունը վերացնելու նպատակով, հետագայում անոթը պատրաստվում է կոնաձև, զագաթով ուղղված գեպի ներքեւ:

Հնդկաստանում զրի ժամացույցները կառուցվում էին դրան հակառակ սկզբունքով: Ներքին մակերևույթի վրա գըծված ժամագծերով և ներքեսում անցք ունեցող դատարկ անոթը դրվում էր զրի մակերևույթի վրա: Զուրբ անցքից հետզհետե լցվում էր անոթի մեջ, որի մակարդակով էլ որոշում էին անցած ժամանակամիջոցը: Եթե անոթը ամբողջովին լցվելու ընկղմվում էր զրում, այն դուրս էին հանում, դատարկում և ապա նորից դնում զրի մակերևույթի վրա:

Համեմատաբար ուշ շրջանում զրի ժամացույցները բավականին կատարելագործվում են, դրանք ցույց էին տալիս ու միայն օրվա ժամը, այլև ամիս-ամսաթիվը, շաբաթվար օրը: Որպեսզի ստորին անցքից ջուրը հավասարաշափ թափվեր, այսինքն ճնշումը մնար հաստատում, սովորաբար ժամացույցում օգտագործում էին երկու անոթներ: Սուազին անոթը միշտ լցված էր լինում՝ նրա մեջ ծորակից թափվող ջրով: Ստորին անցքով ջուրը թափվում էր երկրորդ անոթի մեջ, որում եղած զրի մակարդակով որոշվում էր օրվա ժամը: Որպեսզի առաջին անցքի միշտ լցված լիներ, ծորակը բացում էին այնքան, որ նրանից թափված զրի քանակությունը փոքր-ինչ ամէլլի լինի անոթի ստորին անցքից թափված զրի քանակությունից: Ավելորդ մասն էլ թափվում էր անոթի եզրերից գեպի դուրս: Այսինքն այդպիսի ժամացույցները անընդհատ ջուր էին ժամաստում: Այդ պատճառով էլ զրի ժամացույցն անվանվեց կլեպտորա, որ բառացի նշանակում է ջրողությունը կլեպտորաներ թարելունում գոյություն ունեն: մեր թվականությունից դեռևս շատ առաջ՝ երկրորդ հազարամյակում:

Անկասկած զրի ժամացույցները մեծ առավելություններ

ունեին արեգակնային ժամացույցների նկատմամբ, սակայն սրանք էլ ունեին իրենց թերությունները: Նախ անհրաժեշտ էր ժամացույցին անընդհատ ջուր ժամակարարել, անհարմար էին տեղափոխման ժամանակ: Որպեսզի ժամացույցը ճիշտ աշխատեր, անհրաժեշտ էր մաքուր ջուր: Երկար աշխատող կլեպտիդրաների անցքերը լայնանում էին, մեծանում էր թափվող ջրի քանակությունը, այսինքն ժամային բաժանումները չէին համապատասխանում իրական տևողություններին: Թերություն էր նաև այն, որ ջրի ժամացույցների աշխատանքը կախված էր չերմաստիճանից:

Ե) Ավագի ժամացույցներ: Նշված թերությունների մի մասից զերծ էին ավագի ժամացույցները: Սրանք կազմված էին ապակյա, կոնաձև երկու անոթներից՝ իրար միացված զագաթներով: Վերեկ անոթում գտնվող ավագը նեղ պարանոցով հետրզետե թափվում էր ստորին անոթը: Ավագի մակարդակը ցուց էր տալիս անցած ժամանակը: Երբ վերեկ անոթից ավագը ամբողջովին դատարկվում էր, ժամացույցը շրջում էին և պրոցեսը կրկնում: Ավագի ժամացույցներ էին պատրաստում նաև փոքր շափսերի, որոնք ուղղաձիգ դիրքով դնում էին գրանում կամ ամրացնում ոտքին: Հաճախ նման բուկրզունքով աշխատող ժամացույցներում ավագի փոխարեն օգտագործում էին զանազան հեղուկներ:

Ավագի ժամացույցների (նախատեսված մի քանի բոլոր համար) կարելի է հանդիպել նաև մեր ժամանակներում լարուատորիաներում ու բժշկական հիմնարկներում:

Զրի ու ավագի ժամացույցները զուգահեռաբար օգտագործվեցին ավելի քան մեկ հազարամյակ, որից հետո դրանք փոխարինվեցին ավելի կատարելագործված ժամանակաշափ գործիքներով:

Գ) Կրակի ժամացույցներ: Միշին դարերում եկեղեցիներում ու թագավորական պալատներում դրվում էին հատուկ մոմեր, որոնք ունեին բաժանմունքներ: Մոմի այրման շափով որոշվում էր ժամանակը և զանգերի միջոցով այն ազդարարվում ընակշությանը: Կրակի ժամացույցներից են լինական զարթուցիչները: Զյութի ու փայտի տաշեղի խառնուրդից պատրաստում էին հատուկ ձողեր, որոնք հորիզոնական դիրքով դնում էին հատուկ պատվանդանների վրա ու մի ժամացույցը գործում էր 1200 ատամ:

Ժամանմանքներից կարելի էր իմանալ անցած ժամանակը, մյուս կողմից էլ, երբ կրակը հասնում էր ծողի վրա զգված թելին, այն կտրվում էր և նրա ծայրերին կախված ժանրոցները ընկնում էին մետաղյա թասի մեջ և ուժեղ ձայն արձակում:

Կրակի ժամացույցների թվին է պատկանում նաև ժամացույց-լամպը: Ապակյա անոթի վրա, որի մեջ լցված էր այրվող հեղուկը, կային բաժանմունքներ: Այրվելով, հեղուկը հետրզետե պակասում էր, և նրա մակարդակով որոշում էին օրվա ժամը: Երբեմն այդ ժամացույցն այնպես էին պատրաստում, որ ցուցմունքը տրվում էր սլաքով՝ թվատախտակի վրա: Դրա համար հեղուկի մակերեսութիւնը դրա զնում էին լողակ, որի վերին ծայրից միացված թելը ցցվում էր սլաքի առանցքի վրա և մյուս ծայրից կախվում ծանրոց: Երբ հեղուկի մակարդակն իջնում էր, իջնում էր նաև լողակը, որի հետևանքով բարձրանում էր ծանրոցը և պտտեցնում սլաքի առանցքը: Հեղուկը վերջանալու դիպքում այն նորից էին լցնում, որից լողակը բարձրանում էր, իսկ ծանրոցը իջնում և վերականգնում իր սկզբնական դրությունը:

Այսպիսի լամպերը պատրաստում էին այնպես, որ այրվող պատրուզը գտնվի ժամացույցի թվատախտակի դիմաց և գիշեր ժամանակ, առանց օժանդակ լույսի, հնարավոր լինի տեսնելու իմանալ օրվա ժամը: Այս բանը մեծ անհրաժեշտություն էր, որովհետեւ այդ ժամանակներում լուցկի դեռևս գություն շռմեր:

Կրակի ժամացույցները զրի և ավագի ժամացույցների նըկատմամբ անկասկած ավելի շատ թերություններ ունեին, և պատահական չէր, որ նրանք գործածությունից ավելի շուտ դուրս եկան:

Լ) Մեխանիկական ժամացույցները զոյություն են ունեցել դեռևս 9-րդ դարում: Ակզրում գրանք ունեցել են շատ մեծ շափեր և դրվել են տաճարների, պալատների ու հասարակական շենքերի վրա: Տիլոն-Բրագեն (15-րդ դ.) աստղագիտական նպատակներով օգտագործում էր մի ժամացույց, որի անիվներից մեկի տրամադիմքը հավասար էր մեկ մետրի և ուներ

24  
Մեխանիկական ժամացույցները կառուցում էին հետեւյալ սկզբունքով: Հորիզոնական գլանի վրա փաթաթված էր պա-

իան, որի ծայրին կախված էր ծանրոց: Ծանրոցը ձգում էր պարանը և աշխատում այն քանդել, որի շնորհիվ էլ պտտվում էր զլանը: Գլանի վրա ամրացված ատամնավոր անիվը, այլ անիվների օգնությամբ, այդ շարժումը փոխանցում էր թիք ատամնավոր անիվն: Վերջինիս առանցքին ամրացվուծ էր ժամացույցի սլաքը:

Թիք ատամներով անիվը պտտվում էր դանդաղ և հավասարաչի: Շարժումը կարգավորում էր ուղղիչ հարմարանքը: Վերջինս մետաղյա ձող էր, որի ծայրերում կային ծանրոցներ, իսկ կենտրոնական մասում՝ երկու թիակներ: Վերջիններս հաջորդաբար ընկնելով ու բռնելով թիք ատամներից, անվիճ հնարավորություն շին տալիս արագ պտտվելու:

17-րդ դարում հիմնավորվել է (Դ. Գալիլեյ) և պատրաստվել ավելի կատարյալ՝ ճոճանակավոր ժամացույց. մշակվել է ճոճանակի տատանման տեսությունը (Հ. Հյուգենս): Այդ բանը հնարավորություն տվեց, ճոճանակի երկարության փոփոխմամբ կարգավորել ժամացույցի աշխատանքը<sup>3</sup>:

Ճոճանակի օգնությամբ թիք ատամներով անիվի պտույտը կարգավորելու համար Հյուգենսը տվեց անկեր-խարիսխային հարմարանքը, որը փոքր-ինչ ձևափոխված օգտագործում է նաև ժամանակակից ժամացույցներում:

15-րդ դարում ժամացույցների միջանիզմներն աշխատեցնելու համար ծանրոցների փոխարեն օգտագործվում են նաև զսպանակներ: Դրանք հնարավորություն տվեցին փոքրացնել ժամացույցների շափսերը, և արդեն 16-րդ դարի ըսկրգներին պատրաստվել են նաև գրպանի ժամացույցներ:

Անցյալ դարի կեսերից գործածության մեջ մտան էլեկտրական ժամացույցները: 20-րդ դարում ժամացույցների կատարելագործման հետ հանդես եկան նաև կվարցային, ատոմային, էլեկտրոնային և այլ ժամացույցներ:

Առաջներում, երբ ժամացույցները մեծ ճշտություն չունեին, և կյանքի պահանջները բավարարվում էին մոտավոր ժամանակի իմացությամբ, ժամացույցներն ունեցել են միայն

մի սլաք՝ ժամասլաք: 16-րդ դարի կեսերին հանդիս են գալիս բոպիներ ցույց տվող, իսկ 18-րդ դարի 60-ական թվականներին էլ վայրկյաններ ցույց տվող սլաքները: Այժմ որոշ ժամացույցներ (կվարցային, էլեկտրոնային և այլն) ուղղակի թվերով գրում են ժամացույցի ցուցմունքը, հաճախ արտահայտելով նաև վայրկյանի հարյուրերորդ ու հազարերորդ մասերը:

## ՀԻՆ ՈՒ ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵԳԱԿԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՑՈՒՅՑՆԵՐԸ

Գնումններ: Մի քանի տարի առաջ Հայաստանում հայտնաբերվեցին մեզանից հազարավոր տարիներ առաջ պատրաստված երկու քարե սյուներ-գնոմոններ: Դրանցից մեկն այժմ գրվել է երեսնի ֆիզիկայի ինստիտուտի բակում, իսկ մյուսը՝ նորքի զանգված թաղամասում: Զի բացառվում, որ միաժամանակ որպես գնոմոն է ժառայել նաև էջմիածնի վանքի բակում գտնվող ուրարտական քարե սյունը:

Արեգակնային ժամացույցներ: Սրանք լայն կիրառություն են ունեցել հին ու միջնադարյան Հայաստանում: Հիմնականում օգտագործվել են ուղղաձիգ ժամացույցներ, որոնք կառուցվել են շենքերի հարավային պատերի վրա: Սովորաբար որպես այդպիսի շենքեր ծառայել են եկեղեցիներն ու տաճարները, որոնք ճշտորեն կողմնորոշված են հորիզոնի կողմերի նկատմամբ: Սրեգակնային ժամացույցներ են փորագրված նաև որոշ տապանաքարերի վրա:

Թվատախտակի ժամերն սկսվում են առավոտյան արևածագից մինչև արևամուտ՝ 1-ից 12, ընդ որում թվերի փոխարեն օգտագործվել են հայկական այբուբենի տառերը: Առաջին ինյակը նշանակում է միավորներ, 10-ի փոխարեն գրված է ժ, 11-ի և 12-ի փոխարեն էլ համապատասխանորեն՝ ժԱ: և ժԲ: ժամացույցների ձողը հնում պատին ամրացվել է ուղղահայաց, և ժամագծերն էլ տարվել են իրարից հավասար անկյունային հեռավորության վրա: Ա(1) և ԺԲ(12) ժամագծերը հորիզոնական են, կեսօրին համապատասխանողն էլ՝ ուղղված

<sup>3</sup> Հյուգենսը արտածեց  $T = 2\pi \sqrt{\frac{1}{g}}$  բանաձևը, որտեղ  $T$ -ն ճոճանակի պարբերությունն է, 1-ը՝ ճոճանակի երկարությունը, իսկ  $g$ -ն՝ երկրագնդի ձգողական ուժի արագացումը:

է ներքև: Որոշ ժամացույցներում (օրինակ, Գանձասարի վանչքի վրայինը) ժամագծերի փոխարեն փորագրված են կետեր՝ առանց տառաթվեր օգտագործելու: Հաճախ այդ կետերի քանակը 12-ից անցնում է, այսինքն տվյալ ժամացույցը ցույց է տալիս ժամից ավելի փոքր ժամեր: Համեմատաբար ուշ դարերի ժամացույցների ձողն ուղղված է զեպի աշխարհի բները (զնուգածեռ է Երկրի պտտման առանցքին):

Մեզ հասած հնագույն արեգակնային ժամացույցը փորագրված է Անիի շրջանի Երերուպի տաճարի պատին (4-րդ դար): Իր կառուցման ճշտությամբ հատկապես աշքի է ընկնում Լինինականի ս. Աստվածածին եկեղեցու ժամացույցը (19-րդ դար):

Ինչպես տեսանք, ուղղաձիղ արեգակնային ժամացույցի ձողը պետք է զուգահեռ լինի Երկրի առանցքին և ժամագծերն էլ տարվեն օգտվելով  $\text{tg}x = \cos\varphi \cdot \text{tg}\vartheta$  բանաձեկցի: Հայաստանի աշխարհագրական լայնությունը մոտավորապես  $40^\circ$  է. ստացվում է, որ ժամը 11-ի (ինչպես և 13-ի),  $10^\circ$  (14-ի),  $9^\circ$  (15-ի),  $8^\circ$  (16-ի),  $7^\circ$  (17-ի) և  $6^\circ$  (18-ի) ժամագծերը կեսօրի (12-ի) գծի հետ պետք է համապատասխանողեն կազմեն  $12^\circ$ ,  $24^\circ$ ,  $37^\circ$ ,  $53^\circ$ ,  $71^\circ$  և  $90^\circ$ : Այսինքն հավասար հեռավորությունների վրա տարված ժամագծերի դեպքում համապատասխան ժամերին կատարվում են հետևյալ սխալները՝  $3^\circ$ ,  $6^\circ$ ,  $8^\circ$ ,  $4^\circ$ ,  $0^\circ$ : Հետաքրքրական է, որ եթե ժամագծերը տարված են հավասար հեռավորությունների վրա, ապա ձողը աշխարհի առանցքին զուգահեռ լինելու և պատին ուղղահայաց լինելու գեզքերում սխալները լինում են գրեթե նույն կարգի: Այսպես, սեպտեմբեր ամսվա համար ստացվում է, որ ժամը 15—16-ին այդպիսի ժամացույցների ցուցմունքները գրեթե համընկում են, դրանից առաջ մեկի սխալը տեղի է ունենում իրականից գեպի մեծ կողմը, իսկ մյուսում՝ դեպի փոքր կողմը: Ժամը 15—16-ից հետո ունենում ենք հակառակ երկություն:

Այսպիսով, հին ու միջնադարյան Հայաստանում ուղղաձիղ արեգակնային ժամացույցների պատրաստումը պարզեցված է, որի հետեւանքով կատարվում է որոշակի սխալ, սակայն այն մի քանի աստիճանից (համապատասխանորեն ժամանակի մեկ-երկու տասնյակ րոպեից) չի անցնում, որը, իհարկե, այն

ժամանակվա պայմաններում նկատելի դժվարությունները չեր կարող հարուցել:

**Ստվերաշափեր:** Հայկական ստվերաշափեր աղյուսակների տվյալներից հեշտությամբ կարելի է որոշել, թե որ աշխարհագրական լայնության համար են դրանք կազմված: Եվ իրոք, հայտնի է, որ մարդու հասակը մոտավորպես 7 անգամ երկար է իր ոտքի թաթից: այսինքն՝

$$\text{tgh} = \frac{z}{n},$$

որտեղ ի-ը Արեգակի անկյունային հեռավորությունն է հորիզոնից, իսկ ո-ը՝ մարդու ստվերի երկարությունը ոտնաշափերով: Մյուս կողմից էլ կեսօրին

$$\text{tgh} = \text{tg}(90^\circ - \varphi + \delta),$$

որտեղ ծ-ն Արեգակի հակումն է տվյալ օրվա համար: Հավասարեցնելով այդ երկու արտահայտությունների աշ մասերը և վերցնելով ծ-ն աստղագիտական տարեգրից, ստվերաշափի տվյալ ամսվա համար էլ կեսօրի ո-ի համապատասխան արձեքը (որը կլինի այդ ամսվա տվյալներից ամենափոքրը), կստանանք գ-ն:

Մատենադարանի բազմաթիվ ձեռագրերում պահպանված ստվերաշափերի վերոնշյալ վերլուծությունը ցույց է տալիս որ ստվերաշափերը, որպես ժամանակի շափման մեթոդ: Կիրառվել են Հայաստանի իր ժամանակի տարածքի գրեթե ուղղությունը աշխարհագրական լայնություններում:

Ահա թե ինչպես կարելի է որոշել ուղղաձիղ առարկայի ստվերի երկարությունը տարվա տվյալ օրվա համար: Արեգակի հակումը (ծ-ն) օրվա ընթացքում գործնականորեն չի փոխվում, այսինքն Արեգակի օրական շարժումը կարելի է ընդունել զուգահեռ հասարակածի հարթությանը: Նշանակում է ուղղաձիղ առարկայի ստվերի ծայրը հասարակածի հարթության վրա կգծի շրջանագիծ, իսկ առարկայի ստվերն էլ տարածության մեջ կգծի շրջանային կոն: Այդ կոնի հատումը հորիզոնական հարթության հետ կախված կլինի վերջինիս դիրքից, այսինքն աշխարհագրական լայնությունից:

Հասարակածի և հորիզոնի հարթություններով կազմված

անկյունը հավասար է  $90^\circ$ —ի, որտեղ գ-ն տեղի աշխարհագրական լայնությունն է: Երկրի բևեռներում ( $\varphi=90^\circ$ ) գրանք համընկնեն. նշանակում է հորիզոնի հարթությամբ կոնը կհատվի նրա հիմքին զուգահեռ, այսինքն ուղղաձիգ առարկայի ստվերի ծայրը այս դեպքում կգծի շրջանագիծ: Միշին լայնություններում (մասնավորապես Հայաստանի գրաված տարածքում) գարնանային ու աշնանային պիշերահավասարի օրերին ուղղաձիգ առարկաների ստվերը ամբողջ օրվա ընթացքում ընկնում է արևմուտք-արևելք ուղղի երկայնքով: Տարվա մնացած օրերին ստվերի եզրագիծը հորիզոնական հարթության վրա տեղափոխվում է հիպերբոլով: Ընդորում մարտի 21-ից սեպտեմբերի 23-ը հիպերբոլները զոգավորությամբ ուղղված կլինեն դեպի հյուսիս, իսկ տարվա մյուս կեսին՝ դեպի հարավ:

Աստղագիտական (կամ պարալակտիկ) եռանկյունուց հայտնի է՝

$$\cos z = \sin \varphi \sin \delta + \cos \varphi \cos \delta \cos \alpha,$$

որտեղ  $z$ -ը լուսատուի զենիթային հեռավորությունն է, իսկ  $\vartheta$ -ն՝ ժամային անկյունը, Հայաստանի պայմաններում  $\varphi \approx 40^\circ$ : Վերցնելով Արեգակի ծ-ն աստղագիտական տարեգրքից, իսկ  $\vartheta$ -ն էլ փաստորեն ցուց է տալիս տվյալ և կեսօրյա ժամերի տարբերությունը, և Ա արժեքները զնելով նշված բանաձևում. կարող ենք որոշել Արեգակի  $z$ -ը: Դա կլինի այն ուղղանկյուն եռանկյան սուր անկյուններից մեկը, որի կից էջը էջը առարկայի երկարությունն է (ա), իսկ մյուս էջը՝ ստվերի երկարությունը (բ), որտեղից էլ կորոշվի ստվերի երկարությունը տվյալ ժամանակամարք:

$$b = a \cdot \operatorname{tg} z$$

Տեսական հաշվումների ու ստվերաշահերում պարունակող տվյալների մանրամասն համարությունը ցուց է տալիս, որ այդ պայուսակները կազմվել են որոշ կլորացումներով: Նախ յուրաքանչյուր ամսվա համար տրված է միայն մեկ աղյուսակ (ամսվա կեսի հաշվումները վերագրված է ամբողջ ամսին): Ճշգրիտ աղյուսակներ կազմվել են ամառային արեալարձի օրվա համար (հունիս ամսվա աղյուսակը), իսկ մյուս ամիսներինը կազմելիս աղյուսակային համապատասխան թվերը մեծացվել են որոշակի շափերով: Այսպես, աղյուսակներից

մեկում մայիսի ու հունիսի համար մեծացվել են 1-ով, ապրիլինը և օգոստոսինը՝ 2-ով, մայիսինն ու սեպտեմբերինը 3-ով և այլն:

Անկասկած նման արհեստական օրինաշափություններ մտցնելը որոշ շափով կատարված է աղյուսակային տվյալների ճշտության հաշվին, սակայն հաշվումները ցուց են տալիս, որ հաշվարկային ու ընդունված տվյալները իրարից շատ չեն տարբերվում: Դրա փոխարեն այդ շեղումները հնարավորություն են տալիս հեշտ հիշելու աղյուսակային տվյալները և ստվերաշափի կազմել առանց եռանկյունաշափական բանաձևերի դիմելու:

Միշնադարյան որոշ ձեռագրերում, մասնավորապես Անանիա Շիրակցու աշխատություններից մեկում ցերեկվա ժամը որոշելու համար առաջարկվում է շափել 12 մատ երկարություն ունեցող ուղղաձիգ ձողի-քանոնի ստվերի երկարությունը (այդ քանոնը բաժանված է 30 հավասար մասերի և ստվերն էլ շափվում է այդ նույն քանոնով): Զափկած արդյունքին անհրաժեշտ է գումարել 12 և հանել որոշակի թվից՝ համապատասխան տվյալ ամսվա համաստեղությանը (Խեցգետնի դեպքում՝ 2, Առյուծի դեպքում՝ 4, Կույսի դեպքում՝ 6, Կարիճի դեպքում՝ 8, Աղեղնավորի դեպքում՝ 10, Այծեղջուրի դեպքում՝ 12): Դրանից հետո 72-ը պետք է բաժանել ըստացված տարբերության վրա: Քանորդը ցուց կտա առավոտից մինչև տվյալ պահը անցած ժամերի քանակը: Իսկ եթե շափումները կատարվում են կեսօրից հետո, այդ արդյունքը ցուց կտա մինչև արեամուտ մնացած ժամերի քանակը<sup>1</sup>:

<sup>1</sup> Ըստ այդ տեսության հունիսին ստվերի երկարությունը կասօրին ստացվում է 2 մատ: Հաշվի առնելով նաև ձոյի երկարությունը, հեշտությամբ որոշվում է այն տեղի աշխարհագրական լայնությունը, որի համար կազմված է այդ ստվերաշափը: Ստցվում է  $\varphi=33^\circ$ :

Նույն սկզբունքով սեպտեմբերի կեսօրին ստվերի երկարությունը կորոշվի՝  $72:(x+12-8)=6$  բանաձևով, որտեղից էլ  $x=8$ :

Եղ իրոք.  $h-\delta=90^\circ-\varphi$  հանրահայտ առնելությունից ստանում ենք  $h=57^\circ$ : Տեղադրելով  $tgh = 12:x$  կապակցությունում, նորից ստանում ենք  $x=8$ : Այսինքն ձիւս են նաև սեպտեմբերի ավյալները: Մյուս կողմէց էլ ստացվում է, որ հունիսից (2) սեպտեմբերը (8) միշին հաշվով ստվերը ամսական երկարում է 2 մատով: Դեկտեմբերին այն կազմի 12 մատ: Այստեղից էլ երեսում է, թե ինչո՞ւ է կազմում ավելացվում 12: Հակառակ դեպքում որոշ ամիսների տարբերությունը կտար բացասական թիվ (մի բան, որ այն ժամանակ գնում էր օգտագործվում):

Պատմությանը հայտնի են նաև ձեռքերի մատների միջոցով ցերեկվա ժամի որոշման մոտավոր մեթոդներ։ Անցյալ դարի կեսերին հայկական մամուլում<sup>2</sup> նկարագրվել է դրանց համանման մեթոդներից մեկը։

Զարի ձեռքին տանք այնպիսի դիրք, որ նա լինի հորիզոնական, ձեռքի ափի ուղղված լինի դեպի վեր և ցուցամատն էլ ուղղված լինի արևելք-արևմուտք ուղղությամբ։ Բութ մատով ձեռքի ափի միջին գծի դիմաց ուղղաձիգ բռնենք ցուցամատի երկարությանը հավասար մի ձող։ Այդ ձողի ստվերը ցուց կտա ցերեկվա ժամերը հետևյալ կերպ։ Եթե ստվերն ուղղված լինի դեպի ցուցամատի ծայրը, ապա կլինի առավոտն ժամը 6-ը, եթե ուղղված լինի դեպի միջին մատի ծայրը՝ կլինի ժամը 7-ը։ Ստվերը դեպի մատնեմատի ծայրն ուղղված լինելու դեպքում կլինի ժամը 8-ը, դեպի ճկույթի ծայրը՝ ժամը 9-ը, դեպի ճկույթի միջին խաղը՝ ժամը 10-ը, և դեպի ճկույթի հիմքը՝ ժամը 11-ը։ Կեսօրին ստվերն ուղղված կլինի ձեռքի ափի միջին գծի ուղղությամբ։ Երեկվա երկրորդ կեսի ժամերը որոշելու համար առաջարկվում է վարվել համանման եղանակով՝ հակառակ հաչորդականությամբ։

Գիշերվա ժամի որոշելը աստղերի դիտումներով։ Մատենադարանի № 1780 ձեռագրում (17-րդ դարի գրչություն) պարունակվում է գերմանացի աստղագետու մեխանիկ Պ. Անդիանու (1495—1552) «Կոսմոգրաֆիա» աշխատության թարգմանությունը լատիներենից (թարգմ. Հովհաննես Անկյուրացու, 1621 թ.): Այստեղ տրված է նաև գիշերվա ժամը աստղերի դիտումներով որոշելու գործիք՝ «աստղական» (աստղային), կենարոնական անցքով նայում են Բնենային աստղին, իսկ շարժական բռնակը պտտելով, նրան տալիս են այնպիսի դիրք, որ այն անցնի Մեծ արջի շերտի վերջին երկու աստղով (α, β)։ Այդ դիրքից ստացված գործիքի ցուցմունքը գրվում է

Այժմ տեսնենք, թե համարիչում ի՞նչ թիվ պէտք է վերցնել, որ բաժանվ ստվերի երկարությանը, գումարած 12 և հանած ստվերի երկարությունը, հավասար մինի առավատից մինչև կեսօր սկզած ժամերի բանակին (6)։ Ե:  $(x+12-x)=6$ , որտեղից էլ Ե: 72։

Այսպիսով, վերոնշյալ կանոնը ամբողջապես հիմնավորված է  $33^{\circ}$  աշխարհագրական լայնության համար։

<sup>2</sup> Այդպիսի նկարագրություն կա, օրինակ, «Բազմավիճակ» (Վենետիկ) 1852 թվականի համարում (էջ 320)։

«լուսնացույցի» վրա՝ կուսնի ցուցչի փոխարեն։ Այնուհետև Արեգակի ցուցչը դրվում է տվյալ ամսվա ու ամսաթվի վրա։ Հենց այդ ցուցչին էլ առաջին՝ անշարժ շրջանի վրա ցույց կտա գիշերվա ժամը։

Որ Հայաստանում այդ ժամանակներում գիշերվա ժամը որոշվել է նաև նշված եղանակով, ցույց է տալիս ոչ միայն թարգմանության մեջ նկարագրված այդ եղանակը, այլև այն, որ տեսառում կա հատուկ նկար, որի վրա նշված է, որ գիտումը կատարում է Կարապիտ Վարդապետը։

Լուսնային ժամացույց։ Մատենադարանում պահպանվում է 14-րդ դարի աստղագիտական սարք՝ «Լուսնացույց»<sup>3</sup>։ Դա մագաղաթից պատրաստված իրար վրա դրված և ընդհանուր առանցքի շուրջը պատվող տարրեր շափերի շրջաններ են, որոնց վրա կան գրություններ ու բաժանմունքներ։ Ստորին շրջանի շառավիղը 110 մմ է։ Շառավիղներով այն բաժանված էր 12 մասի, յուրաքանչյուրն իր հերթին՝ 5-ական մասի։ Ամենաարտաքին մասում գրված են ամիս-ամսաթիվը, դրանց կողքին նկարված է Կենդանաշրջանի համապատասխան նշանը, իսկ փոքրին՝ ներքեւ երկրորդ օդակում՝ համաստեղության անունը։ Այդ սանդղակը սկսվում է դեկտեմբերից (նկարում խաչից) և ժամացույցի սլաքի ուղղությամբ շարունակվում մինչև նոյեմբեր։

Երկրորդ շրջանի տրամադիթը 63 մմ է։ Նրա եզրը բաժանված է 30 մասի։ Դրանք ցույց են տալիս կուսնի փուլի համակը հաշված օրերով։ Երրորդ շրջանը (տրամագիթը 53 մմ) ունի բառանկյունաձև կտրվածք կուսնի փուլի համակը 2-րդ շրջանից կարգալու համար և շրջանաձև կտրվածք, որը ավտոմատորեն ցույց է տալիս կուսնի համապատասխան փուլի տեսքը։ Այս շրջանը ունի նաև ցուցիչ 1-ին և 2-րդ շրջանների բաժանմունքները ցույց տալու համար։

Լուսնացույցով որոշվում է կուսնի ու Արեգակի անկյունային հեռավորությունը, կուսնի համապատասխան փուլի գեպքում։

Լուսնացույցը կողմնորոշելով և իմանալով Արեգակի գիրքը, նրա հակառակ ուղղությամբ էլ կորոշվի «ստվերի» ուղ-

<sup>3</sup> Մատենադարան տե՛ս Բ. Թամանյան, Հայ աստղագիտության պատմություն, հ. 1, ե., 1964, էջ 200—207։

ղությունը, այսինքն գիշերվա ժամը: Հուսնացույցով գիշերվա ժամը կարելի է որոշել նաև հետևյալ կերպ. այն դնում են Հորիզոնական և կողմնորոշում (խաչով ուղղում դեպի հյուսիսի կետը): Կենտրոնում դնում են ուղղաձիգ առարկա և նրա ստվերի միջոցով որոշում ժամը: Միայն թե իրական արեգակնային ժամանակի վեր ածելու համար պետք է օգտվել հետևյալ կանոնից. նորալուսնի ժամանակ այդ ստվերի ցուցմունքը հնոց կլինի որոնելի ժամը: Քանի որ կուսինը Արեգակից օրական ետ է ընկնում 3/4 ժամով (48 րոպեով), նշանակում է կուսնի այլ փուլերի դեպքում լուսնացույցի ժամային ցուցմունքին պետք է գումարել այնքան անգամ 48 րոպե, որքան կուսնի փուլի հասակն է (օրերով) հաշված նորալուսնից կամ լիալուսնից:

Այդ դատողությունները հանգեցնում են նրան, որ գիշերը ևս կարելի է օգտվել արեգակնային ժամացույցից (կուսնի լուսավորությամբ առարկայի դցած ստվերով), միայն թե պետք է ժամանակը ավելացնել վերոնշյալ կանոնի համաձայն, կամ ուղղակի օգտվել հետևյալ աղյուսակից.

կուսնի փուլը (օրերով)	ավելացվող ժամանակը	կուսնի փուլը (օրերով)	ավելացվող ժամանակը
1 կամ 16	0 Ժ. 48 ր.	9 կամ 24	7 Ժ. 12 ր.
2 17	1 36	10 25	8 00
3 18	2 24	11 26	8 48
4 19	3 12	12 27	9 36
5 20	4 00	13 28	10 24
6 21	4 48	14 29	11 12
7 22	5 36	15	12 00
8 23	6 24		

**Աստղաբ-ժամացույցներ:** Միջնադարյան հայկական ձեռագրերում կան աստղագիտական-դեղողիական գրքիքների՝ աստրոլարների բազմաթիվ նկարագրություններ և նըրանցից օգտվելու կանոններ: Մասնավորապես նշված են, որ աստրոլարներն օգտագործվել են նաև գիշերվա ու ցերեկվա տևողությունների, ինչպես և օրվա ժամը որոշելու նպատակով: Օրինակ, Մատենադարանի № 2180 ձեռագրում աստրոլարի օգնությամբ լուծվող բազմաթիվ խնդիրների ցանկում

գրված է նաև այն մասին, որ օգտագործելով՝ աստրոլարը, աստղերի օգնությամբ որոշվում է գիշերվա ժամը, Արեգակից լուսավորված առարկաների ստվերի ուղղությամբ էլ՝ կեսօրվա պահն ու ցերեկվա ժամը:

Մեզ է հասել 17-րդ դարի հայկական աստրոլար (գտնվում է Բյուրականի աստղագիտարանում), որի մի երեսին գծագրված է ուղղանկյուն՝ համապատասխան բաժանումներով: Առվորաբար աստրոլարների այդ մասը օգտագործվել է ինչպես ցամաքում, այնպես էլ նավագնացության մեջ՝ օրվա ժամը որոշելու նպատակով: Օքսֆորդի (Անգլիա) պատմության թանգարանում պահպանվում է 9-րդ դարի արաբական աստրոլար, որի վրա կան նաև հայկական գրություններ, իսկ աստրոլարի ետևի կողմի երրորդ քառորդում գծագրված է ուղղանկյուն, որի վրա կան միայն հայկական գրություններ: Ինչպես ուղղաձիգ, այնպես էլ հորիզոնական բաժանումներն ունեն 12-ական մաս և յուրաքանչյուր երեք մասը նշված է հայկական այբուբենի տառերով՝ Գ(3), Զ(6), Թ(9) և Ժ(12): Անկյունագծի ուղղությամբ էլ գրված է «սատուբ» մատնց» (մատների ստվեր), որը մեկ անգամ ևս ապացույում է, որ այն օգտագործվել է ստվերի (շափկած մատնաշափերով) միջոցով օրվա ժամը որոշելու նպատակով:

Б. Е. ТУМАНЯН

## ДЕЛЕНИЕ СУТОК НА ЧАСТИ В ДРЕВНЕЙ И СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

### Резюме

В настоящей работе Б. Е. Туманяна приведены результаты исследований тех рукописей Матенадарана АН Арм. ССР, в которых описываются методы и пробы определения времени. Приводятся единицы измерения времени, а также их деление на части.

На многих старинных храмах Армении до сих пор сохранились солнечные часы. В рукописях Матенадарана имеются многочисленные тексты, в которых говорится о солнечных часах, употреблявшихся в разные времена и на разных широтах территории Армении.

В Армении в основном употреблялись вертикальные солнечные часы, т. е. такие, плоскость циферблата которых перпендикулярна плоскости горизонта и проходит через точки востока и запада. Такие часы (многие из них сохранились) устанавливались на южных стенах зданий.

Как на этих, так и на схемах других часов, в том числе и в таблицах, вместо цифр выведены буквы армянского алфавита, из коих первые девять букв обозначают единицы, следующие девять—десятки и т. д.

Нумерация циферблата часов начинается с утра и продолжается до вечерних часов—от единицы до 12. Это объясняется тем, что в древней Армении началом суток считается утренний рассвет.

Для построения часовых линий горизонтальных и вертикальных солнечных часов некоторые армянские авторы предлагали следующий, чисто геометрический метод.

Возьмем взаимно перпендикулярные прямые АВ и СД (рис. 2) и прямоугольный треугольник ОМН, острый

угол которого равен географической широте местности ( $\phi$ ). Из точки N проведем NK перпендикулярно к гипотенузе до пересечения с прямой АВ. Проведем из точки O' полуокружность радиусом O'K=KФ и разделим ее на 12 равных частей. Точки деления соединим с центром окружности и полученные радиусы продолжим до пересечения с касательной СД' (II СД). Если эти точки касательной соединим с точкой, то получим соответствующие направления часовых линий.

В горизонтальных солнечных часах плоскость циферблата устанавливается горизонтально и линия АВ проходит по направлению юго-север. В этом случае направление стержня будет ON, если плоскость треугольника будет перпендикулярна к горизонтальной плоскости.

Понятно, что такое построение дает правильные направления часовых линий.

Для построения вертикальных солнечных часов график горизонтальных солнечных часов подводится к южной стене здания, веха ON продолжается до пересечения со стеной и в этой точке в таком же направлении ставится стержень. Соединив основание стержня с точками пересечения часовых линий вышеупомянутого чертежа со стенкой, получим соответствующие часовые линии вертикальных солнечных часов. График вертикальных солнечных часов приведен на рис. 4.

В истории известны также солнечные часы, которые были построены на восточных и западных вертикальных стенах храмов. График таких часов приведен на рис. 5.

Օրվա մասերի բաժանումը հին և միջնադարյան  
Հայաստանում

ԹՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ժամանակի շափման միավորները և նրանց մասերի բաժանումը	3
Օրվա մասերի շափման մեթոդները հնում ու միջնադարում	8
1. Օրվա տվյալ պահի որոշումը երկնալին մարմինների դիտումներով	9
2. Կենդանական ու բուսական ժամացույցներ	12
3. Ժամանակ ցույց տվող գործիքներն ու սարքերը Հին ու միջին	11
4. Ժամանակ ցույց տվող գործիքներն ու սարքերը Հին ու միջին	27
Քարերում	36

Բեմականացնելու համար առաջարկությունները

Հաստարակության է ներկայացրել  
համարական աստղագիտակայի ամբիոնը

Հրատարակության խմբագիր՝ Ա. Մ. Գարեգինյան  
Գեղարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան  
Տեխնիկական խմբագիր՝ Գ. Վ. Նալբանդյան  
Վեբստուգող սրբազրի՝ Ս. Ա. Պալքախյան